



«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ» ԳՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1889

ԹԻԻ 5

ՍԱՌՆԱԾՈՎՔ

Չուիցերիոյ ամենէն զարմանալի բաներուն կարգէն են սառնածովք, կամ սառած գետերը: Սառնածովք կը գտնուին նաև Նորվեգիա, Հիւսիսային Ամերիկա, Հիմալայս լեռանց ուղիք, և ուր որ կան մշտնջենաւոր ձեանց սահմաններէն վեր բարձրացած շատ լեռներ: Չիւնը տարուէ տարի կ'իջնէ այս լեռանց վրայ, և որովհետև շերտաւորեալ սառի ճանր այնչափ բարձր չէ որ հալեցունէ ձիւնը աւելի արագ քան որչափ կը հաւաքի այն, վար կը գլորի լեռանց կողերէն և կը լեցունէ վարը գտնուած հովիտները: Մեծ ճնշումը պինդցունելով այս ձիւնը սառի կը փոխէ: սառը մասամբ մը կը հալի և յետոյ դարձեալ կը սառի: Ամառը չարունակ ջուր կը հոսի սառնածովուն ծայրէն, և անոր ընթացքին մէջ ահագին ահոսներ կը ձևանան վաղող ջրին միջոցաւ: բայց սառնածովը բնաւ չաներևութանար, վասն զի թէպէտ սառույցը ամառը բաւական կը հալի, սակայն ձմեռը կը շատնայ:



ՄԵՆ ԱՄԷՐ ԵՍՏՈՆՈՎՔ

Թերևս Չուիցերիոյ սառնածովերուն ամենէն նշանաւորն է պատկերին մէջ ցուցուածը որ կը կոչուի «Մեծ Ալէյ սառնածով»: Ասոր երկայնութիւնն է 15 կամ 16 մղոն, և լայնութիւնը՝ մէկ մղոնէ մինչև երկու մղոն: Չայն տեսնող անձ մը կ'ըսէ թէ երբ վար կը

նայուի անոր վրայ մերձակայ լեռներէն մէկէն, գրեթէ սոսկում կ'ազդէ անոր ահագին ամայութիւնը: Կայ տեղ մը ուր կը գտնուի փոքրիկ լիճ մը որոյ ջուրերը կը թրջեն սառնածովը և անկէ գոյութիւն կ'առնուն: Ասոր նման ուրիշ սառնածովէ մը կը բղխի Ռոն գետը «որ դուրս կը ցատկէ վիթխարի սառնեղէն այրէ մը ա-

հեզագոյ գոռիւնով, իբր թէ ուրախացած իւր սառէ բանտէն ազատուելուն համար»: Ռոն իւր մթին և պզտոր ջուրը կը թափէ ձինեվրայի լճին մէկ ծայրին մէջ, և դարձեալ դուրս կ'ելլէ լճին միւս ծայրէն՝ բիւրեղի պէս վեհա, և կը հոսի դէպ ի Գազիա և Միջերկրական Մով:

ՍԱՌՆԱԾՈՒՄՆԻՑ ԱՀԱԳԻՆ ՈՅԺԸ

Ահա ուրիշ պատկեր մը ևս, ցուցնելու համար թէ սառնածովը ինչ ահագին ոյժ ունին: Թէպէտ ըստ երևութիւն անշարժ են, սակայն փորձը կը ցուցնէ թէ կը շարժին: Փորձի համար այս սառնածովուց վրայ խրճիթ չինուելով, այնպէս թողուած է հոն տարիններով, և հասկցուած է որ սառին զանգուածը թէպէտ անզգալի բայց շարունակ յառաջ կը շարժի դէպի ծով: Այս շարժումը երբեմն 300 կամ 400 ոտք միայն է մէկ տարուան մէջ, բայց է անընդհատ: Այս շարժմամբ ամենէն խիտ կրանիթ քարերը կը յըղկուին, ինչպէս կ'երևի պատկերին մէջ: Սառնածովուց մեծ ոյժը կը հասկցուի նաև սա իրողութենէն որ կը քշեն կը տանին ժայռի ահագին կտորներ: Այսպիսի կտոր մը կ'իջնայ սառնածովուն մակերեսին վրայ և կը թուի թէ անշարժ մնացած է, բայց ստոյգն այս է թէ կամաց կամաց կը տարուի յառաջ մինչև որ վերջապէս մղոններով հեռին կը գտնուի այն տեղէն ուր ինկած էր: Երկրաբանք սառնածովուն կ'ընծայեն շատ կարևոր գործ մը աշխարհիս անցեալ պատմութեան մէջ. վասն զի եղած է ժամանակ երբ այժմու բարեխառն կլիմայ ունեցող երկիրներ ծածկուած էին ձիւնով և սառով ինչպէս հիմա է կրիոլանտիս: Եթէ հարցուի թէ ժայռի այսինչ ահագին կտորին ինչպէս հնար է գտնուիլ լեռնէ մը կամ քարահանքէ մը այսչափ հեռի, պատասխանն է՝ Սառնածով մը բերած է զայն: Սա է լռիկ, անընդհատ և անդիմադրելի ոյժի շատ հիանալի օրինակ մը:

Կ'ՈՒՋԵՄ ՄԱՐԻ ԸԼԼԱԼ

Տղաք շատ անգամ կ'երգեն, «Հրեշտակ մ'ըլլալ կ'ուզեմ ես», բայց ամենեւին ստոյգ չէ թէ անոնք պիտի ըլլան հրեշտակ, որչափ երգեն ալ: Ես սակայն տղաք բնապէս կը մեծնան և կ'ըլլան մարդ եթէ չարգելուին որ և իցէ պատճառով մը: Շատ տղաք այնչափ չեն փափաքիր հրեշտակ ըլլալու որչափ կը փափաքին մարդ ըլլալու. և եթէ ըլլան բարի, առողջ, առաքինի, մաքուր և հաւատարիմ մարդ, ճանչցողները մատով պիտի ցուցնեն զանոնք իբրև Աստուծոյ գործոց ազնուագոյններուն կարգէն դասելով:

Եթէ կ'ուզես մարդ ըլլալ, մի սպաններ ինքզինքդ: Մի ցատկեր վեր կամ բարձր տեղերէ վար, կամ վազեր և կամ որ և իցէ ուրիշ անպէտ բաները:

ներ այնպէս սաստիկ կերպով որ առողջութիւնդ վնասուի: Շատ տղաք կը ջանան իրենցմէ տարօր և զօրաւոր տղոց և մարդոց բրած բաներն ընել, և կ'ըլլան խեղանդամ («սփռ») եւ հիւանդոտ իրենց բոլոր ազագայ կենաց մէջ: Ձգուչացէք ասկէ:

Եթէ կ'ուզէք մարդ ըլլալ, մի ըլլաք շատակեր կամ որկրամոլ և արէք ձեր ստամոքսը և ունենաք անմարտողութիւն, և ձեր բոլոր կեանքին մէջ թըշուառ ըլլաք վատառողջ ըլլալով: Պարզ թող ըլլայ ձեր ուտեստը և առողջարար. և կերէք այնպիսի բաներ որ զօրութիւն տան ձեզ և ըլլաք քաջառողջ: Երեկոյին կանուխ մտէք անկողին, և



ՍԱՌՆԱԾՈՒՄՆԻՑ ԱՀԱԳԻՆ ՈՅԺԸ

առաւօտուն կանուխ ելէք, և ժրջան աշխատեցէք մաքուր, բաց օդին մէջ. և մարդիկ պիտի զարմանան թէ ինչպէս լաւ կը մեծնաք և ինչպէս դիւրաւ կը ժամանէք մարդկութեան հասակին:

Եթէ կ'ուզէք մարդ ըլլալ, զգոյշ կեցէք անչա՛հ գրութիւններ կարդալէ, անպարկեշտ խօսակցութիւններէ, ծրխախտ գործածելէ, օղիէ և ամէն ոգեկից ըմպելիներէ և բոլոր վատ ունակութիւններէ: Այս բաները գաճաճ կը թողուն տղան և կ'արգելին զնա մարդ ըլլալէ: Եթէ տղայ մը կ'ուզէ ըլլալ տժգոյն, թշուառ, և ապերժանիկ, եթէ կ'ուզէ ունենալ արուած դէմք մը, այնպէս որ չհամարձակի մարդու երես նայելու, եթէ կ'ուզէ որ իւր երեսը յաւիտեան խորշմեալ, խոտոռ և հիւանդ

դոտ ըլլայ, թող հետևի վերը յիշուած և ուրիշ վատ ունակութիւններու, և թող վատան ըլլայ որ պիտի չըլլայ մարդ:

Կան շատեր այս խեղճերուն մէջ որ կրնային երջանիկ ըլլալ եթէ զերծ ըլլային չար ունակութիւններէ: Կը փափաքինք զգուշացունել մեր նորահասակ բարեկամները այս չարեաց դէմ, որպէս զի մեծնան մարդ ըլլան և ծառայեն Աստուծոյ այս աշխարհին մէջ և մասնակից ըլլան անոր փառացը հանդերձեալ աշխարհին մէջ:

ՄԵՐ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Անգամ մը փոքրիկ տղայ մը գնաց անտառը և աղաղակեց, «Ա՛յ» և արձագանգն ըսաւ, «Ա՛յ»: Տղան սաստիկ բարկացաւ կարծելով թէ զինք կը ծաղրէին և ըսաւ, «Կատե՛մ քեզ»: Արձագանգն ըսաւ, «Կատե՛մ քեզ»: Տղին բարկութիւնն աւելցաւ և աղաղակեց, «Կը ծեծե՛մ քեզ»: Դարձեալ արձագանգը ըսաւ, «Կը ծեծե՛մ քեզ»: Փոքրիկ տղան կրակ կտրած տուն գնաց և պատմեց յորը թէ անտառին մէջ տղայ մը պիտի ծեծէր զինք, և թէ կ'ատէր զինք, և ինչ: Մայրը հասկըցաւ գազոնիքը և ըսաւ անոր, «Տղաս, եթէ անտառն երթաս և աղաղակես, «Կը սիրե՛մ քեզ», այն տղան ալ պիտի ըսէ քեզի, «Կը սիրե՛մ քեզ»: Ասոր վրայ փոքրիկ տղան դարձեալ դուրս ելաւ և ըսաւ, «Կը սիրե՛մ քեզ»: Արձագանգը անմիջապէս պատասխանեց, «Կը սիրե՛մ քեզ»:

Երբ անէն դուրս ելլելով կ'երթանք եկեղեցի կամ կը մտնենք ընկերութեան մէջ սիրոյ այս զգացումով՝ որ ներդաշնակութիւն կ'ընծայէ բոլոր մեր կարողութեանց, մեր հետ կը տանին սիրոյ միջնորդող մը, և այսպէս սիրելի կ'ըլլանք մարդոց, և մարդոց մէջ կը տարածենք սիրոյ այս զգացումը:

ՍԱԼՎԱՏՈՐԻ ՓԱՐՈՍԸ

Հիւսիսային Ամերիկայի ամենէն հարաւային ժայրը Սան Սալվատորի փոքրիկ հանրապետութեան մէջ կայ փառոս մը որ կրնայ կոչուիլ ամենէն նշանաւորն աշխարհիս բոլոր փարոսներուն: Սալվատորի փարոսը, ինչպէս կը կոչուի այն, բոլոր ուրիշ տեղեր տեսնուած փարոսներէն ամենէն բարձրն է: Գրեթէ ուղղակի ծովէն վեր կը բարձրանայ եօթն հազար ոտնաչափ, և անոր

գագաթէն կ'արձակուի հազար ոտնաչափ բարձր բոց մը և անհուն քանակութեամբ ահագին փետրոյ պէս ծածանող ծուխ: Բոցի այս ահագին հասանքը կը բարձրանայ և կ'իջնայ եօթն վայրկեանն անգամ մը այնպէս կանոնաւոր կերպով ինչպէս հզօր բաղկերակի մը զարկը և այսպէս շարունակած է գիշեր և ցերեկ հարիւր տասնևութ տարիներէ ի վեր:

Արդէն հասկցաք թէ այսպիսի փառու մը բնաւ չկրնար մարդէ շինուած ըլլալ: Ոչ ոք բայց միայն տիեզերաց Արարիչը կարող է շինել այսպիսի զարմանալիք մը: Այն է հրաբուխ: Բայց կը զարմանաք որ մարդիկ փարոս կը կոչեն զայն: Այս հրաբուխին անունն է Իզալքոյ, և բաց ի անոր կանոնաւոր ընդհատմամբ բորբոքելէն, կայ նաև ուրիշ զարմանալի բան մը: Այն է մի միայն հրաբուխը որ չէր գտնուեր յԱմերիկա երբ Գոլոմպոս գտաւ զայն:

Այս հրաբուխին սկիզբն եղաւ 1770 ին գարնան մէջ: Ամիսներ առաջ խահուէի և լեղակի ընտիր արտի մը մէջ աշխատող անձինք ահաբեկ եղած էին գետնին տակէն գոռում գոչում լսելով և երկրին ցնցումներէն: Ժամանակ մը ետքը ազարակի չէնքերը փլան, ծառերը արմատներէն ելան, և ահագին մեծութեամբ հրաբուխի բերաններ բացուեցան տափարակ և հարթ դաշտերուն մէջ: Ի վերջոյ մեծ սասանութիւնը տեղի ունեցաւ, և բոլոր գործաւորք փախան սարսափով, կարծելով թէ աշխարհ պիտի կործանէր: «Սպանիական Ամերիկայի Մայրաքաղաքները» անուն նոր հրատարակուած գիրքի մը մէջ այս զարմանալի դիպուածը կը նկարագրուի հետագայ կերպով.

«Նախ եղան կարգ մը սոսկալի պայթիւններ որ երկրիս կեղևը բարձրացուցին քանի մը հարիւր ոտնաչափ, և պատառուածներուն մէջէն ժայթքեց բոց, լավա և ահագին քանակութեամբ ծուխ: Մէկ երկու ժամ ետքը եղաւ ուրիշ և աւելի մեծ սասանութիւն մը որ ցնցեց և սարսեց հարիւրաւոր մը ղոններով երկիր: Հազարաւոր տակառաչափ (մէկ տակառաչափ = իբր 800 քաշ) ծանրութեամբ ժայթքեց նետուեցան օդը և շատ մը անոնով կ'ուռնէր տեղեր ինկան: Երկրիս մակերեսը բարձրացաւ իբր երեք հազար ոտնաչափ, և ներքին խոռոչներէն կը հոսէր անապին քանակութեամբ լավա և կ'արձակուէին քարեր որ վար իյնալով կը դիզուէին այն ծակերուն շուրջը որոց մէջէն դուրս

նետուած էին: Լավայի հոսումը և քարերու արձակումը շարունակեցին քանի մը օրեր անկանոն միջոցներ ընդհատելով, և նոյն ժամանակը բարձրաձայն պայթիւններ և երկրաշարժներ կը պատահէին, որոց պատճառաւ շատ աւերած եղաւ բոլոր այն երկրին մէջ: Այս վրդովումները զգալի եղան նիքարակուայի և Հոնտուրասի մէջ:

Այս կերպով սկիզբ առաւ հրաբուխ մը, որ այժմ կը ընմանի առողջ և զուրաւոր տղի: Երկու ամիս չանցած տափարակ և հարթ դաշտ մը դոյացաւ աւելի քան չորս հազար ոտնաչափ բարձրութեամբ լեռ մը, և հրաբուխին բացուած բերնէն շարունակ արձակուած նիւթերը դիզուած են բերնին շուրջը, այնպէս որ անոր բարձրու-



ՄԱՅՈՒՌ ԿԱՌՈՒԹՈՒՄ Ի ԹԵԼԱՏԱԿ ԿՐԾՈՒԹ ԹԵԼԻ

թիւնն աւելցած է երկու հազար ոտնաչափ ևս:»

Այս փարոսին լոյսն ուր որ հասնի առաջնորդ և ազգարար է նաւաստիներուն: Անոնք պէտք ունին այս երկուքին ալ, վասն զի այն ծովերն է ապառաժուտ և վտանգաւոր:

ԿԻՅԵՈՒՄ ԹԵԼ

Պատկերին մէջ տեսնուած մատուռը որ Զուիցերիոյ Լուսերն լճին քով չինուած է, կը կոչուի դիւցազնի և հայրենասիրի մը անունով որ ինչպէս պատմագրաց քննութիւնը ցուցած են, հաւանականապէս երբեք ունեցած չէ գոյութիւն: Անոր վրայով Զուիցերացի պատմագիրներուն ըսածն է հետևեալը. Յամին 1307 Զուիցերացիք որ կը հարստահարուէին Աւստրիացիներէն,

որոշեցին ձեռք բերել իրենց անկախութիւնը: Թէլ առաջնորդն էր այս շարժման: Օր մը Աւստրիացի կառավարչին, Կէսլէրի, գլխարկը Ալթորֆ գիւղին մէջ ցիցի մը ծայրը դրուելով հրամայուեցաւ գիւղացւոց խոնարհութիւն ընել անոր: Թէլ մերժեց հազանդիլ այս հրամանին, և անոր համար բռնուեցաւ և դատապարտուեցաւ մահուան: Բայց Կէսլէր լսելով որ Թէլ քաջ ազնուաւոր է, ըսաւ անոր թէ պիտի ինայուէր իւր կեանքին եթէ յաջողէր նետով զարնել իւր որդւոյն գլխուն վրայ դրուած խնձոր մը: Թէլ յաջողեցաւ, և նոյն ժամանակ ուրիշ նետ մը ինկաւ անոր հանդերձէն վար: Կէսլէր հարցուց անոր թէ այդ նետն ինչ պիտի ընէիր: «Քեզ պիտի սպաննէի ատով եթէ քնատի որդւոյս» պատասխանեց Թէլ անվեհեր համարձակութեամբ: Ասոր վրայ չըլթաներով կապած նաւակ մը տարին զնա որպէս զի անցունէին Լուսերն լճին անդիլի կողմը. բայց ճամբան սոսկալի փոթորիկ մը ելաւ, և թի քաչողները աղաչեցին Կէսլէրի արձակել զԹէլ իւր շիթաներէն որպէս զի ազատէր զիրենք իւր սոժով և հանձարով: Թէլ քչեց նաւակը ծովերին մօտ և դուրս ցատկեց տափակ ժայռի մը վրայ որ մինչև հիմա կը ցուցուի և կը կոչուի «Թէլի Ոստիւն»: Հոն զարկաւ զԿէսլէր նետով, և այս նշան մը եղաւ ընդհանուր վրդովման որով Աւստրիացիք դուրս վանուեցան Զուիցերիայէ:

Զուիցերացիք այս պատմութիւնը ըրած են իրենց որդւոց դարերով, և անոր վրայ բանաստեղծութիւններ յօրինած են: Անոնց համար շատ դժուար է ընդունիլ թէ իրենց այս քաջարի հայրենակիցն իրօք չունէր գոյութիւն, այլ է երևակայութեան ծնունդ: Հաւանականապէս Զուիցերիոյ հասարակ ժողովուրդը տակաւին աներկբայ կը հաւատայ այս պատմութեան:

ՅԱՐԴԷ ՄԱՐԻ

Միացեալ Նահանգաց նաւային ըսպաներէն մին Գորէյայէ Ամերիկա, Ուոշինկիթընի կառավարութեան թանգարանին զրկեց յարդէ մարդ մը: Յարդէ մարդը շատ մաքուր կը շինուի ազնիւ յարդէ, և կ'ունենայ իւր ստամբքին մէջ Չինական դրամներ:

Այս յարդէ մարդուն վրայ բացատրութեան համար ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք Հրէական սովորութեան

մի: Կը յուսամ թէ կարգացած էք Սուրբ Գերբին մէջ թէ Հրեայք ունէին ազատ արձակուելու նախազ մը: Այս էր աւստուն մը սոյ գլխուն վրայ քահա հայապետը կը դնէր իւր ձեռունը՝ խառտոյանելով խորայէլացոց մեղքերը, և յետոյ կ'արձակէր նոխազը աւստուս իւր մեղաց բեռովը զոր կը կրէր ժողովրդեան տեղը: Հրեայ գիրքերէն ոմանց մէջ կ'ըսուի թէ անոնք այս նոխազը վար կը նետէին գահաւանդէ (աւարտ) մը:

Քորէայի մէջ երբ մարդ մը զգայ թէ մեղք մը գործած է, կը գիտէ կախարդին: Կախարդ կրնայ գտնուիլ գրեթէ հրապարակական ամէն տեղ, նաւակի ձևով փաթրիկ թմբուկ մը ունի նա իւր ձեռքը և կը հնչեցունէ զայն, աչաքը թիւն հրաւիրելու համար գետինը փռուած իւր փոխաթին, որոյ վրայ հմայքներ (պաշտ) տարածուած են վաճառուելու համար: Դուստով մը կը շինէ ապաշխարողին համար արձան մը բրնձի յարդէ, անոր մարմնոյն մէջ ծածկելով քանի մը Չինական գրամներ, Այնուհետև կը սկսի կախարդական արարողութիւններով խաբել բոլոր վրէժխնդիր ոգիները՝ հաւատացունելու համար թէ այն յարդէ արձանն է բուն իսկ չար մարդը:

Մեղաւորը տուն կը տանի յարդէ մարդը, կը հագցունէ անոր իւր հին ցած հանդերձները, և կը նետէ զայն փողոցը: Մասամբ մը ստանալու համար ծածկուած ստակը, և մասամբ մը օգնելու համար ստուապեալ մեղսակից ընկերով մը, ամէն անցորդ մեծ հաճոյքով կը յօժարի օգնել յարդէ մարդը կորսնցունելու գործին: Այս բանը, իբր թէ, չար ոգիներուն բարկութիւնը կ'իջեցունէ, և ապաշխարողը կ'ազատուի:

Քորէացիներէն շատեր Պաւտայականութիւնն ընդունած են, բայց անոնք իրենց հետ կը տանին յարդէ մարդն ալ իրենց ընդունած նոր կրօնքին մէջ, առանց անպատեհութեան: Առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը Քորէացի նորահաւատը կ'առնու այս արձաններէն մին, կը հագցունէ անոր իւր հին հանդերձները երեկոյեան գէմ, կը նետէ զայն փողոցը, և ինք նոր հանդերձներ հագնելով ուրախ զուարթ սոնախմբութիւն կ'ընէ բոլոր գիշերը: Այդ արձանին մէջ դրած է աղօթքով՝ ամբողջ իւր հին անձը:

Այսպէս դուրս նետուած այն յարդէ մարդուն ինչ որ կը պատահի, կը կարծուի թէ բուն մարդուն նախկին

անձին կը պատահի, մինչ նոր հանդերձներով հագուող մարդը չստուածներէն կը համարուի նոր մարդ: Երբ 1886 ին Գաղղիացիք արշաւեցին Քորէա, Քորէիի պաշարման միջոցին հաջողեալ Քորէացիք հարիւրաւոր յարդէ մարդեր շինեցին, հալցուցին անոնց իրենց հանդերձները, և կայնեցուցին զանոնք թշնամոյն հրազենքներուն հասնելու տեղերը, անտարակոյս սախոգհրով որ արձանները մեռնէին փոխանակ իրենց, և իրենք այսպէս զերծ մնային սպաննուելէ:

Թերևս այս յիմարական սովորութիւնն ունէր իւր մտքին մէջ Ամերիկա ճամբորդող Քորէացի մը, որ երբ տեսաւ յարդէ մարդ մը Ուոշինկէնի թանգարանին մէջ ապակի անտակի մը վրայ նստած, ըսաւ իւր թարգմանին, «Այլ ևս պէտք չունինք ատոր»:

ՅԱԶՈՂԱԾ ՄԵԾԱՄՏՈՒԹԻՒՆ

Պէնճամին Ուէսթ, մեծ նկարիչը, ամենէն փոքր որդին էր Փէնսիլվանիացի սոցիալ ֆուէյքըրի մը որ ունէր ուրիշ ութ զաւակներ ալ: Երբ եօթը տարեկան էր, գծեց իւր քոյրերէն մեկուն պատկերը որ մեծապէս զարմացուց բոլոր տունը. և քաջախելութիւն ընդունեց իւր հօրմէն որ յօժարեցաւ ամէն միջոց հայթայթել որդւոյն որչափ կը տանէր իւր կարողութիւնը: Գպրոցական օրերուն մէջ Պէնճամինի նկարչութեան վրձինը շինուած էր կատուի պոչէ փրցուած մազերէ, և ներկը կ'ընդունէր իւր մօր լուացարարութեան համար գործածած լեղակի սոսկրակին մէջէն:

Կը պատմուի թէ երբ Պէնճամին տակաին տաներեք տարեկան չեղած կառքով կը պարտէր իւր տարիքն ունեցող ուրիշ սղի մը հետ, երկուքը խօսակցելով իրենց ապագային վրայ, միւս սղան ըսաւ թէ ինք կ'ուզէր դերձակ ըլլալ: «Ի՞նչ, ըսաւ Պէնճամին, դերձակ: Բերմն առանձին ըրէ պըտոյտդ: Իսկ ես, պիտի ըլլամ նկարիչ, և հաւասար թագաւորներու և կայսրերու: Էս չեմ ուզեր պոյոյա ընել աըդի մը հետ որ կ'ուզէ ըլլալ լոկ դերձակ»:

Պատանւոյն այս մեծ ամտութիւնը մընայ իւր մէջ մինչև կենացը վերջին տարիները: յերաւի չէր փոխեր իւր դիրքը թագաւորութեան հետ. բարձր համբաւ ստացաւ գեղարուեստից մեծ աշխարհին մէջ, և իւր ժամանակի նըկարիչներուն զլուխն եղաւ: Փորձաւ

առթիւնը ամենէն լաւ ուսուցիչն է մարդուս: Պէնճամին, թէպէտ ի բնէ մեծամիտ, սակայն փորձառութեամբ այնպիսի քաղցր և խոնարհ բնասորութիւն մը ունեցաւ որ աշխարհի մէջ իր մէ աւելի անձնուէր բարեկամ մը չէր գտնուեր ստորին կարգէ անձանց, վասն զի սղիկեցաւ, ինչպէս ամէն ուղիղ մարդ կը սորվի, թէ ճշմարիտ մարդկութիւնը, այն մարդկութիւնը որ նոյնչափ կարող է զարդ ըլլալ դերձակին նստարանին՝ որչափ կարող է զարդարել գահ մը, կը հասնի մինչև երկրաւոր ուրիշ բաներու:

ԱՌԱՆՅ ԶՈՒԱՆԻ ԿԱՆՈՒԱԾ ԾԱՆՈՒԹԻՒՆ ՍԸ



Չուան մը խիստ ազի ջրոյ մէջ քանի մը անգամ թաթխելու եւ ապա չորցունելու է: Այս նախապատրաստութիւն պարտիք առանձին տեղ մը կատարել: Չուանն երբ լաւ մը չորնայ, առէք զայն եւ հանդիսականաց ներկայացուցէք: Նոյն միջոցին չուանի ծայրին թեթեւ մատանի մը կապելով յարմարագոյն տեղէ մը կախեցէք չուանը, և երբ ծայրէ ի ծայր այրէք զայն, ներկայ գտնուողները պիտի ապշին տեսնելով մատանի մը օդոյ մէջ որ սոսկ մոխրի միջոցաւ կախեալ կը մնայ:

Չուանի մանրաթելային մասը թէպէտ կայրի, տակաին բաւական զօրաւոր ազէ խողովակ մը կը մնայ, և սա կարող է օդոյ հոսանաց իսկ դիմադրել և մատանին կախուած պահել:

Այս փորձ որ «Առանց չուանի կախուած ծանրութիւն մը», անուամբ ծանօթ է, հետեւեալ կերպով եւս կրնայ կատարուիլ:

Քառանկիւնի կտոււի մը (թերթիս 1/8 ինչափ) անկիւններուն չորս չուանի ծայրեր կապեցէք եւ այսու կախորանի մը ձեւ տուէք: յետոյ չուաններն եւ կտուան խիստ ազի ջրոյ մէջ քանի մը անգամ թաթխելով չորցուցէք, և ապա յարմարագոյն տեղէ մը կախելով մէջը հակիթ մը դրէք: Այրեցէք չուանները և կտուեայ որբանը: Եթէ փորձը յաջողակութեամբ պատրաստուած է, մեծ զարմացմամբ պիտի տեսնաք թէ որբանն եւ իւր մանկիկն կը մնան օդոյ մէջ, սոսկ մոխրէն կախուած:

Գաղիերէն թարգմանութիւն
Ն. Յ. ԳԱՍԻՊԵԱՆ

Ամերիկայի Միտիոնիոն Բոստոնի Թեմի կողմէն,
Արքեպիսկոպոս Զ. Գ. ԿԻԻՆ
Տնօրէն— Ս. ՊԱՐԵՆԼՍ
Յիմնանդրար Եւրոպայի Գաղիերէն Թեմի կողմէն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՅՈՐԱՆՆԵՐ Ա. ՅԱՅՈՒ ԳՕՍԱՆԱՆ